ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 35

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջով Արենիի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 23 սեպտեմբերի 2016թվականի թիվ 7 նիստի օրակարգը՝

1. Նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Արենի համայնքի սեփականություն համարվող համայնքապետարանի նախկին վարչական շենքից մեկ սենյակ, և <<Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանում Հայաստանում. Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում>> ծրագրի կողմից հատկացված համակարգչային տեխնիկան կանանց զարգացման <<Ռեսուրս կենտրոն>> հիմնադրամին հատկացնելու մասին:
3. Խաչիկ Վիկտորի Առաքելյանին պատկանող 0.193հա և 0.173հա գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
2. ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՐԱՖՖԻ
4. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՎԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՅՈԺԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 36

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ՄԵԿ ՍԵՆՅԱԿ՝ 20ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ, ԵՎ <<ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԿԱՆԱՅՔ ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԿԱՆԱՆՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ <<ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արենի համայնքի սեփականություն համարվող, համայնքապետարանի նախկին վարչական շենքից մեկ սենյակ՝ 20քմ ընդհանուր մակերեսով, անհատույց, 5 տարի ժամկետով հատկացնել կանանց զարգացման <<Ռեսուրս կենտրոն>> հիմնադրամի Եղեգնաձորի մասնաճյուղին, համայնքում կանանց մասնակցությամբ տարվող աշխատանքների կազմակերպման և իրականացման համար՝ որպես գրասենյակային տարածք:
2. <<Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանում Հայաստանում. Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում>> ծրագրի կողմից հատկացված սույն որոշման հավելված 1-ում ներկայացված համակրգչային տեխնիկան 5 տարի ժամկետով, անհատույց, հատկացնել կանանց զարգացման <<Ռեսուրս կենտրոն>> հիմնադրամի Եղեգնաձորի մասնաճյուղին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
2. ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՐԱՖՖԻ
4. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՎԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՅՈԺԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հավելված N1
Արենի համայնքի ավագանու
23 սեպտեմբերի 2016թվականի թիվ 36 որոշման

	Անվանումը	Մակնիշը	Սերիական համարը	Քանակը (հատ)	Գինը (ՀՀ դրամ)
1	Համակարգչի պրոցեսոր	Fujitsu Esprimo P400	YLCN036621	1	278 099.00
2	Համակարգչի պրոցեսոր	Fujitsu Esprimo P400	YLCN036622	1	278 099.00
3	Համակարգչի պրոցեսոր	Fujitsu Esprimo P400	YLCN036624	1	278 099.00
4	Համակարգչի էկրան (մոնիտոր)	Fujitsu 23 LEDE23T-6	YV4F401445	1	80 349.00
5	Համակարգչի էկրան (մոնիտոր)	Fujitsu 23 LEDE23T-6	YV4F401451	1	80 349.00
6	Համակարգչի էկրան (մոնիտոր)	Fujitsu 23 LEDE23T-6	YV4F401568	1	80 349.00
7	Սնուցող սարք (UPS)	APC RS500, 230V	5B1223290551	1	32 763.00
8	Սնուցող սարք (UPS)	APC RS500, 230V	5B1223290575	1	32 763.00
9	Սնուցող սարք (UPS)	APC RS500, 230V	5B1223290547	1	32 763.00
10	Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք	Canon I-Sensis MF 4580DN	HAL05689	1	157 850.00
11	Նոթբուք	ACER ULTRABOOK M5581TG 53314G52MASS (NX.M2GER.011)	25009360016	1	407 000.00
12	Թվային տեսախցիկ	Canon E OS 600 D	283076100610	1	313 080.00
	Ընդամենը			12	2 051 563.00

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 37

ԽԱՉԻԿ ՎԻԿՏՈՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԱՆՈՂ 0.193ՀԱ ԵՎ 0.173 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի 1 կետի պահանջներով, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և ՀՀ կառավարության 2001թ.-ի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշումը, ՀՀ վարչապետի 2001թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 19.09.2016թվականի թիվ 72 դրական եզրակացությունը, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն

1. Խաչիկ Վիկտորի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 0.193հա հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, ծածկագիրը՝ 10-008-0184-0002, վկայականի համարը՝ 18112013-10-0002) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասրակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Խաչիկ Վիկտորի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 0.173հա հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, ծածկագիրը՝ 10-008-0184-0004, վկայականի համարը՝ 18112013-10-0001) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասրակական կառուցապատման գործառնական նշանակության:

ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

2. ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՐԱՖՖԻ

4. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՎԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՅՈԺԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ